



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲՈՅԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 38003/04)

ՎՃԻՌ

ՍՏԴԱՍԲՈՒՐԳ

22 մարտի 2011թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

22/06/2011

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

Բոյաջանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
 հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Ժոզեփ Բասադեվալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էխբերտ Մայեր [Egbert Myjer],

Ինետա Ջիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Միհայ Պուալելունջ [Mihai Poalelungi],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *դատավորներ,*

Էլ Սանտիագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2011 թվականի փետրվարի 15-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,
 կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն Ռոզա Բոյաջանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2004 թվականի հոկտեմբերի 8-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 38003/04) հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2006 թվականի սեպտեմբերի 19-ին Երրորդ բաժանմունքի նախագահը գանգատն ուղարկել է Կառավարություն: Նաեւ որոշվել է գանգատի ըստ էության քննության հետ միեւնոյն ժամանակ իրականացնել դրա ընդունելիության հարցի քննությունը (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1935 թվականին եւ ապրում է Երեւանում:

5. Սկսած 1971 թվականից՝ դիմումատուն խորհրդային ռուբլով տարբեր ավանդներ է ներդրել ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում: Դրանք ներառել են՝

ա) 1973-1974 թվականներին բացված երեք ժամկետային ավանդների տեսքով ավանդադրված գումարներ, որոնց ընդհանուր գումարը 1993 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 19 795.30 ռուբլի, 1991 թվականին բացված երեք 40% փոխհատուցման հաշիվներին ավանդադրված գումարներ, որոնց ընդհանուր գումարը 1993 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 8 264 ռուբլի, եւ 1971, 1977 եւ 1988 թվականներին բացված երեք ցպահանջ հաշիվներին ավանդադրված գումարներ՝ վերջինը դիմումատուի թոռնուհու անունով, որոնց ընդհանուր գումարը 1993 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 29 384.81 ռուբլի:

բ) 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության 23 պարտատոմսեր՝ յուրաքանչյուրը 50 ռուբլի արժողությամբ:

գ) 1990 թվականի պետական նպատակային անտոկոս փոխառության չորս պարտատոմսեր՝ մեկը 2 500 ռուբլի արժողությամբ, որը դիմումատուին իրավունք էր տալիս ստանալու տեսաձայնագրիչ, մյուսը՝ 1 000 ռուբլի արժողությամբ, որը դիմումատուին իրավունք էր տալիս ստանալու հեռուստացույց, եւ եւս երկուսը՝

յուրաքանչյուրը 200 ռուբլի արժողությամբ, որոնք դիմումատուին իրավունք էին տալիս ստանալու երկու կարի մեքենա.

դ) ԽՍՀՄ Խնայքանկի տասնմեկ սերտիֆիկատ, որոնք ձեռք են բերվել 1990 թվականին՝ յուրաքանչյուրը 1 000 ռուբլի արժողությամբ:

6. 1993 թվականի հուլիսի 5-ին Կառավարությունը որոշել է ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղը վերակազմավորել Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված խնայողական բանկի (այսուհետ՝ Հայխնայքանկ): Ավելի ուշ՝ այդ ամիս, խորհրդային ռուբլին հանվել է շրջանառությունից:

7. 1993 թվականի նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ է դրվել ազգային արժույթը՝ ՀՀ դրամը՝ 1 դրամը 200 ռուբլու հարաբերակցությամբ:

8. 2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի նկատմամբ ուժի մեջ են մտել Կոնվենցիան եւ Թիվ 1 արձանագրությունը:

9. 2004 թվականի հունիսի 21-ին դիմումատուն դիմել է Հայխնայքանկ՝ իր ավանդները վերականգնելու պահանջով:

10. 2004 թվականի հուլիսի 21-ի նամակով Հայխնայքանկը դիմումատուին տեղեկացրել է, որ՝

«... Հայխնայքանկում մինչեւ 1993 թվականի հունվարի 1-ը նախկին ԽՍՀՄ ռուբլով ներդրված ավանդների փոխհատուցման հարցը ներկայումս գտնվում է Հայաստանի Ազգային ժողովի եւ Կառավարության ուշադրության կենտրոնում: Դրա ապացույցն է Հայաստանի կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշումը, որում նշված է, որ «...Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է քաղաքացիների կողմից մինչեւ 1993 թվականի արժույթի փոխարկումը «Հայխնայքանկ» ՓԲԸ-ում նախկին ԽՍՀՄ ռուբլով ներդրված ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման հետ կապված պատասխանատվությունը»:

Ինչ վերաբերում է Ձեր՝ նախկին ԽՍՀՄ-ի 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի եւ սերտիֆիկատների վերաբերյալ հարցմանը, ապա տեղեկացնում ենք, որ դրանց առնչվող բոլոր գործառնությունները դադարեցվել են Հայաստանի Գերագույն խորհրդի 1993 թվականի հունիսի 10-ի որոշմամբ՝ մինչեւ ԱՊՀ

ԲՈՅԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ ՎՃԻՌ

անդամ պետությունների կողմից դրանց մարման մասին վերջնական որոշում ընդունվելը: Այնուամենայնիվ, դրանից հետո որեւէ որոշում կամ կարգադրագիր չի ընդունվել:

Ինչ վերաբերում է 1990 թվականին Հայաստանի բնակչությանը տրված նախկին ԽՍՀՄ-ի այն նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի վերադարձելիությանը, որոնք նախատեսվել էր փոխարկել տնտեսական եւ կենցաղային ապրանքների՝ սկսած 1993 թվականից, ապա Հայաստանի կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշմամբ դա համարվել է անիրագործելի:

Փոխհատուցման նպատակով՝ Հայաստանի կառավարությունը 1993 թվականի հուլիսի 5-ի թիվ 345 որոշմամբ որոշել է վերոնշյալ [նպատակային անտոկոս] պարտատոմսերի անվանական արժեքը ինդեքսավորել 300 տոկոսով եւ մինչեւ 1993 թվականի օգոստոսի 1-ը բացել ավանդային հաշիվ կամ կատարել վճարումներ, որը Դուք նշված ժամանակահատվածում չեք կատարել:

Ինչպես տեսնում եք, վերոնշյալ հանգամանքներում Հայինայբանկն ավանդների եւ արժեթղթերի մասով վճարումներ կատարելու պարտավորություն չունի:

Հայինայբանկը կկարողանա քաղաքացիներին սպասարկել միայն Հայաստանի կառավարության կողմից ավանդների եւ վերելում նշված արժեթղթերի փոխհատուցման հնարավոր այլընտրանքների ընտրության եւ դրանց վճարման վերաբերյալ որոշում կայացվելուց հետո»:

11. 2004 թվականի օգոստոսի 4-ին դիմումատուն Կառավարության դեմ հայց է ներկայացրել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ պահանջելով վերականգնել Հայինայբանկում ներդրված իր ավանդները եւ արժեթղթերը: Նա, մասնավորապես, պահանջել է, որ իր խնայողություններն իրեն վերադարձվեն այն արժույթով, որով ներդրվել են ավանդները:

12. 2004 թվականի օգոստոսի 6-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը մերժել է ընդունել դիմումատուի հայցը՝ այն հիմքով, որ՝

«...վեճը ենթակա չէ դատական քննության, քանի որ Հայաստանի Ազգային ժողովը եւ Կառավարությունը դեռեւս չեն ընդունել համապատասխան օրենքներ եւ որոշումներ՝ քաղաքացիների կողմից Հայինայբանկում ներդրված ավանդները նրանց վերադարձնելու

կարգի մասին»:

13. 2004 թվականի օգոստոսի 13-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել՝ պնդելով, որ իր հայցն ընդունելը մերժելու պատճառներն անհիմն էին, եւ խնդրելով բեկանել Վարչական շրջանի դատարանի որոշումը:

14. 2004 թվականի օգոստոսի 27-ին Վճռաբեկ դատարանը որոշել է մերժել դիմումատուի բողոքը: Այդպիսով Վճռաբեկ դատարանը հղում է կատարել դիմումատուի հայցն ընդունելը մերժելու հիմքերին եւ գտել է, որ Վարչական շրջանի դատարանի որոշումը հիմնավորված է:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Խնայողությունների վերականգնման հարցին վերաբերող ներպետական դրույթները

1. *Կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի «1990 թվականին հանրապետության բնակչության կողմից գնված պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի հետգնման մասին» թիվ 377 որոշումը*

15. Համաձայն սույն որոշման՝ Կառավարությունը որոշել է, որ քանի որ այդ պարտատոմսերի մարումն անիրագործելի էր ապրանքներ չլինելու պատճառով, ապա բնակչությունից հետ գնված նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերը ձեւակերպվելու էին որպես ավանդներ:

2. *Հայաստանի [Հանրապետության] Գերագույն խորհրդի 1993 թվականի հունիսի 10-ի որոշումը «Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված խնայողական բանկի մասին»*

16. Համաձայն 1-ին կետի՝ Կառավարությանը թույլատրվել է ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղը վերակազմավորել Հայաստանի պետական

մասնագիտացված խնայողական բանկի:

17. Համաձայն 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորել է Հայինայբանկում ներդրված ավանդների եւ այլ արժեքների պահպանումը եւ վերադարձելիությունը:

18. Համաձայն 3-րդ կետի՝ Կառավարությունից պահանջվել է մեկ ամսվա ընթացքում առաջարկություններ ներկայացնել ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղում կատարված խնայողությունների եւ այլ արժեքների ինդեքսավորման վերաբերյալ:

19. Համաձայն 4-րդ կետի՝ 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի եւ ԽՍՀՄ Խնայբանկի սերտիֆիկատների մասով բոլոր գործարքները պետք է դադարեցվեին՝ մինչեւ Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների կողմից դրանց վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը:

3. *Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի հուլիսի 5-ի «[Նախկին] ԽՍՀՄ Խնայբանկի հայկական հանրապետական բանկը Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված խնայողական բանկի վերակազմավորման մասին» թիվ 345 որոշումը*

20. Համաձայն 1-ին կետի՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղը վերակազմավորվել է Հայաստանի [Հանրապետության] պետական մասնագիտացված խնայողական բանկի: Հայինայբանկը նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղի իրավահաջորդն էր:

21. Համաձայն 2-րդ կետի՝ Կառավարությունը երաշխավորել է Հայինայբանկում ներդրված ավանդների եւ այլ արժեքների պահպանումը եւ վերադարձելիությունը:

22. Համաձայն 4-րդ կետի՝ ինդեքսավորվել են խնայողությունների հետեւյալ տեսակները՝ ա) Հայինայբանկի ավանդային հաշիվներում 1993 թվականի հունվարի 1-ի դրությամբ եղած մնացորդը՝ 100 տոկոսով. բ) Հայինայբանկի

ավանդային հատուկ հաշիվներում 1993 թվականի հունվարի 1-ի դրությամբ եղած մնացորդը՝ 100 տոկոսով. գ) 1990 թվականի նախկին ԽՍՀՄ նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի անվանական արժեքը՝ 300 տոկոսով. եւ դ) բնակչության մոտ գտնվող գանձապետական պարտավորությունները՝ 200 տոկոսով:

4. *Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 8-ի «Հայինայբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը մասնավորեցնելու մասին» թիվ 835 որոշումը*

23. Սույն որոշման համաձայն՝ Հայինայբանկը վաճառվել է երկու մասնավոր ընկերությունների: Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարվել էր գնորդների հետ կնքել մասնավորեցման պայմանագիր, որում պետք է պարունակվեին Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող երաշխիքներ: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը պետք է ստանձներ պատասխանատվություն նախկին ԽՍՀՄ ռուբլով մինչեւ 1993 թվականի արժույթի փոխարկումը «Հայինայբանկ» ՓԲԸ-ում քաղաքացիների կողմից ներդրված ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման համար:

5. *«[Հայաստանի Հանրապետության] 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք (ուժի մեջ է մտել 2006 թվականի հունվարի 1-ին)*

24. 10-րդ հոդվածով հաստատվել է ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման 2006 թվականի տարեկան ծրագիրը, որն այդ օրենքում ներկայացվել է որպես հավելված:

25. 13-րդ հոդվածով սահմանվել է, որ ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման աշխատանքները կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Նշված ավանդների դիմաց փոխհատուցումն իրականացվելու էր Կառավարության կողմից հաստատված

պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիման վրա՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում այդ նպատակով առանձին տողով նախատեսվող բյուջետային հատկացումների սահմաններում: 2006 թվականի վերոնշյալ տարեկան ծրագրի հիման վրա Հայաստանի կառավարությունը մշակելու էր այդպիսի փոխհատուցման տրամադրման կարգը եւ սահմանելու էր այն անհատների ցուցակը, որոնք այդպիսի փոխհատուցում ստանալու առաջնահերթ իրավունք ունեին:

6. *Կառավարության 2006 թվականի մարտի 16-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայրանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 352-Ն որոշումը*

26. 1-ին կետի համաձայն՝ այն ավանդատուները, որոնք 2005 թվականի հուլիսի 1-ից մինչեւ 2006 թվականի ապրիլի 1-ն անընդմեջ ընտանեկան նպաստ ստացած ընտանիքների անդամներ էին, իրենց ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեին:

27. 5-րդ եւ 6-րդ կետերի համաձայն՝ 1-ին կետում նշված անձինք պետք է ներկայացնեին դիմում, որպեսզի փոխհատուցում ստանային: Դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն ապրիլի 12-ից ուշ չէր կարող լինել եւ ավարտվելու էր 2006 թվականի մայիսի 12-ին:

28. Համաձայն 27-րդ հոդվածի՝ ավանդատուի՝ Հայաստանի Հանրապետությունից փոխհատուցում պահանջելու իրավունքը ծագում էր այն բյուջետային տարում՝ ա) որի վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված էր սույն կարգով նախատեսված փոխհատուցումների վճարման ծախսային ծրագիր, եւ բ) տվյալ ավանդատուն ընդգրկված էր տվյալ տարվա վճարման ժամանակացույցում:

Բ. Դատարանի մատչելիության հարցին վերաբերող ներպետական

դրույթները

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը

29. 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի եւ 4-րդ մասի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե, *inter alia* (*ի թիվս այլնի*), վեճը ենթակա չէ դատարանում քննության: Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

30. Տվյալ ժամանակահատվածում գործող՝ 228-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ակտը կարող է վերանայվել նոր երեւան եկած հանգամանքների հիմքով, որոնք էական նշանակություն ունեն գործի համար, եւ որոնք հայտնի չեն եղել եւ չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց:

31. Տվյալ ժամանակահատվածում գործող՝ 239-րդ հոդվածի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից եւ ենթակա չէ բողոքարկման:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

32. Դիմումատուն բողոքել է, որ զրկված է եղել դատարանի մատչելիությունից՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքների խախտմամբ, որն այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից... արդարացի... լսումների իրավունք»:

Ա. Ընդունելիությունը

1. *Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառումը*

33. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Իհարկե, 2004 թվականին նա զրկված է եղել դատարանի մատչելիությունից, որովհետեւ տվյալ ժամանակահատվածում առկա չեն եղել այնպիսի համապատասխան իրավական ակտեր, որոնցով կկարգավորվեին վիճարկվող հարցերը: Այնուամենայնիվ, 2006 թվականի մարտի 16-ին Կառավարությունն ընդունել է թիվ 352 որոշումը, որով սահմանվել է ավանդների փոխհատուցման կարգ, եւ որն օրինական ուժի մեջ է մտել 2006 թվականի ապրիլի 6-ին: Այդպիսով, այդ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դիմումատուն կարող էր նոր երեւան եկած հանգամանքների հիմքով հայց ներկայացնել դատարան՝ իր գործով քննությունը վերսկսելու համար՝ համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետի:

34. Դիմումատուն նշել է, որ Վճռաբեկ դատարանի 2004 թվականի օգոստոսի 27-ի որոշումը վերջնական էր եւ ենթակա չէր վերանայման:

35. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման վերաբերյալ կանոնը պետության դեմ միջազգային դատական ատյանում գործ ներկայացնող անձանց պարտավորեցնում է նախ սպառել ազգային իրավական համակարգով տրամադրվող իրավական պաշտպանության միջոցները՝ այդպիսով պետություններին զերծ պահելով միջազգային մարմնի առջեւ իրենց գործողությունների համար պատասխան տալուց նախքան իրենց սեփական իրավական համակարգերի միջոցով հարցերը կարգավորելու հնարավորություն ունենալը: Այդ կանոնը պահպանելու համար դիմումատուն պետք է դիմի իրավական պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք հասանելի են եւ բավարար՝ ենթադրյալ խախտումների մասով փոխհատուցում ստանալու համար (տե՛ս *Ասսենովը եւ այլք ընդդեմ Բուլղարիայի* [*Assenov and Others v. Bulgaria*], 1998 թվականի հոկտեմբերի 28, § 85, *Վճիռների եւ որոշումների մասին*

զեկույցներ 1998-VIII):

36. Ավելին, 35-րդ հոդվածի համաձայն՝ իրավական պաշտպանության հասանելի էլ բավարար միջոցների առկայությունը պետք է լինի բավականաչափ որոշակի ոչ միայն տեսականորեն, այլ նաեւ գործնականում, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցնի մատչելիության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի բացակայության (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Դե Յոնգը, Բալյետը եւ Վան դեն Բրինկն ընդդեմ Նիդեռլանդների* [*De Jong, Baljet and Van den Brink v. the Netherlands*], 1984 թվականի մայիսի 22, § 39, շարք Ա թիվ 77, եւ *Վեռնիլյուն ընդդեմ Ֆրանսիայի* [*Vernillo y. France*], 1991 թվականի փետրվարի 20, § 27, շարք Ա թիվ 198): Չսպառելու մասին պնդող Կառավարությունը պարտավոր է Դատարանին համոզել, որ իրավական պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, համապատասխան ժամանակահատվածում եղել է տեսականորեն եւ գործնականում հասանելի, այսինքն՝ այն մատչելի է եղել, դրանով հնարավոր է եղել դիմումատուի բողոքների մասով տրամադրել փոխհատուցում, եւ առաջարկվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տե՛ս *Ակդիվարը եւ այլք ընդդեմ Թուրքիայի* [*Akdivar and Others v. Turkey*], 1996 թվականի սեպտեմբերի 16, § 68, *Վճիռների եւ որոշումների մասին զեկույցներ 1996-IV*):

37. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի կողմից դիմումատուի հայցադիմումը 2004 թվականի օգոստոսի 6-ին չի ընդունվել [վարույթ] այն հիմքով, որ համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ այն ենթակա չէր դատական քննության՝ համապատասխան ընթացակարգերի բացակայության պատճառով: Վերոնշյալ 91-րդ հոդվածի համաձայն՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող էր բողոքարկվել Վճռաբեկ դատարան: Դիմումատուն օգտվել է այդ հնարավորությունից՝ այդ դատարան ներկայացնելով վճռաբեկ բողոք, որը մերժվել է 2004 թվականի օգոստոսի 27-ին: Այդ որոշումը վերջնական էր եւ ենթակա չէր բողոքարկման: Այդպիսով, դիմումատուն դիմել է իրավական պաշտպանության բոլոր սովորական միջոցներին, որոնք համապատասխան ժամանակահատվածում

հասանելի էին իրեն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության դատավարական իրավունքի:

38. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուն պետք է փորձեր վերսկսել իր գործով քննությունը Կառավարության թիվ 352-Ն որոշման ընդունումից հետո, որով ներդրվում էր փոխհատուցում տրամադրելու կարգը, ապա Դատարանն առաջին հերթին նշում է իր ծավալուն նախադեպային իրավունքն այն մասով, որ կրկին դատական քննություն իրականացնելու կամ իրավական պաշտպանության նմանատիպ արտակարգ միջոցների օգտագործման դիմումը, որպես ընդհանուր կանոն, չի կարող հաշվի առնվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելու նպատակներով (տե՛ս, օրինակ, *Ռ.-ն ընդդեմ Դանիայի* [*R. y. Denmark*], թիվ 10326/83, Հանձնաժողովի 1983 թվականի սեպտեմբերի 6-ի որոշում, Որոշումներ եւ զեկույցներ 35, էջ 218, *Պրիստավսկան ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Prystavska y. Ukraine (dec.)*], թիվ 21287/02, 2002 թվականի դեկտեմբերի 17, եւ *Դենիսովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [*Denisov y. Russia (dec.)*], թիվ 33408/03, 2004 թվականի մայիսի 6): Դատարանի կարծիքով այս գործում առկա չէ նաեւ որեւէ հատուկ հանգամանք, որով դիմումատուից կպահանջվեր օգտվել այդ արտակարգ միջոցից: Մասնավորապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված էր գործով քննությունը նոր երեւան եկած հանգամանքների հիմքով վերսկսելու հնարավորությունը: Այդ հասկացությունը ենթադրում էր այնպիսի հանգամանքներ, որոնք գոյություն են ունեցել տվյալ ժամանակահատվածում, սակայն կողմերին հայտնի չեն եղել: Դատարանը նշում է, որ դիմումատուի գործը քննվել է 2004 թվականի օգոստոսին, մինչդեռ Կառավարության վերոնշյալ որոշումն ընդունվել է 2006 թվականի մարտի 16-ին: Այդպիսով, տվյալ որոշումը չէր կարող համարվել «նոր երեւան եկած հանգամանք» վերոնշյալ 228-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, եւ գործով քննությունը Կառավարության առաջարկած հիմքով վերսկսելու ցանկացած փորձ ապարդյուն կլիներ: Հետեւաբար, չսպառելու մասին Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

2. Եզրակացություն

39. Դատարանը հանգում է այն եզրակացության, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

40. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին դատարանի մատչելիությունից զրկելը համատեղելի էր 6-րդ հոդվածի պահանջների հետ: Մասնավորապես, դիմումատուն դատարաններ դիմել է 2004 թվականի օգոստոսի 4-ին, այսինքն այն ժամանակ, երբ Կառավարությունն արդեն ուսումնասիրում էր Հայխնայբանկում ներդրված ավանդների վերականգնման հնարավորությունները եւ, մասնավորապես, մշակում էր Կառավարության վերը նշված թիվ 352-Ն որոշումը: Ավելին, Ազգային ժողովի՝ 2003 թվականի սեպտեմբերի 10-ի որոշմամբ դրանում ստեղծվել է ժամանակավոր հանձնաժողով, որին նույնպես լիազորված էր ուսումնասիրել այդ խնդիրը: Արդյունքում ընդունվել է «Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2006 թվականի հունվարի 1-ին, իսկ 2006 թվականի ապրիլի 6-ին ընդունվել է Կառավարության թիվ 352-Ն որոշումը, որով սահմանվում էին ավանդատուներին փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները: Այդ ամբողջ գործընթացը հրապարակային էր, եւ անհատները հնարավորություն ունեին տեղեկացված լինելու Կառավարության եւ Ազգային ժողովի կողմից ձեռնարկվող համատեղ միջոցների մասին: Այդպիսով, դատարանների կողմից մեկ անձի կողմից ներկայացված պահանջի քննությունն այնպիսի հանգամանքներում, երբ հարցի ընդհանուր լուծումը դեռեւս մշակման փուլում էր, բացասական ազդեցություն կունենար ամբողջ գործընթացի վրա: Մասնավորապես, բոլոր այն անհատները, ովքեր Հայխնայբանկում ունեին ավանդներ, որոնց թիվը գերազանցում էր 400 000-ը, կսկսեին նմանատիպ հայցեր ներկայացնել

դատարաններ: Հետեւաբար, դատարանները մերժում էին ընդունել այդպիսի հայցեր ըստ էության քննություն իրականացնելու համար, մինչեւ 2006 թվականի ապրիլին ստեղծվեց ավանդների վերականգնման համար համապատասխան իրավական հիմք:

41. Դիմումատուն պնդել է, որ ինքը գրկված է եղել դատարանի մատչելիությունից՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների խախտմամբ: Դատարանները որեւէ վարույթ չեն իրականացրել, դատական նիստեր չեն անցկացրել եւ գործն ըստ էության չեն քննել՝ չնայած այն փաստին, որ ավանդների վերականգնման եւ վնասների դիմաց վճարման վերաբերյալ իր հայցն ուներ քաղաքացիաիրավական բնույթ եւ ենթակա էր դատարանների կողմից քննության:

2. Դատարանի գնահատականը

42. Դատարանը վերահաստատում է, որ դատարանի իրավունքը, որի մի բաղադրիչն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ, սակայն կարող է ենթակա լինել պետության կողմից կարգավորման տեսքով սահմանափակումների: Այդ առումով պետությանը վերապահված է հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Այդուհանդերձ, կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն անձին տրամադրված՝ դատարանի մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, սահմանափակումը համատեղելի չի լինի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, եւ եթե գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Tolstoy Miloslavsky v. the United Kingdom*], 1995 թվականի հուլիսի 13, § 59, շարք Ա թիվ 316-Բ, *Խալֆաունին ընդդեմ Ֆրանսիայի* [*Khalifaoui v. France*], թիվ 34791/97, § 35, ՄԻԵԴ 1999-IX, եւ *Պապունն ընդդեմ Ֆրանսիայի* [*Papon v. France*], թիվ 54210/00, § 90, ՄԻԵԴ 2002-VII):

43. Սույն գործով Հայխնայբանկում ներդրված իր ավանդների վերականգնման վերաբերյալ դիմումատուի հայցը չի քննվել ներպետական դատարանների կողմից՝ այն հիմքով, որ Հայաստանի Ազգային ժողովի եւ Կառավարության կողմից դեռեւս որեւէ օրենք կամ որոշում չէր ընդունվել: Դատարանը համամիտ է Կառավարության այն դիրքորոշմանը, որ իրավունքի այդ սահմանափակումը հետապնդել է իրավաչափ նպատակ: Դատարանը նշում է, որ դիմումատուի հայցն առաջացել է խորհրդային ռուբլու անկման եւ այդ արժույթը շրջանառությունից ամբողջությամբ հանելու հետեւանքով՝ առանց անհատների՝ խորհրդային ռուբլով ավանդների խնդիրը լուծելու: Հայաստանը կանգնել էր իր սեփական դրամական համակարգը ձեւավորելու հսկայական խնդրի եւ նախկին դրամական համակարգի փլուզման հետեւանքով առաջացած խնդիրների լուծման առջեւ: Իհարկե, մեկ անձի հայցի քննությունը, անկախ դրա արդյունքից, կարող էր ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն ունենալ ավանդների վերականգնման ամբողջ գործընթացի վրա. խնդիր, որը պահանջում էր ոչ թե անհատական, այլ համակարգված լուծում՝ հաշվի առնելով տուժած անձանց մեծ թիվը: Հետեւաբար, Դատարանը համարում է, որ դիմումատուի հայցի քննությունը վերոնշյալ հիմքերով մերժելը հետապնդել է իրավաչափ նպատակ, մասնավորապես՝ ապահովել վերականգնման գործընթացի սահուն եւ արդյունավետ իրականացում:

44. Ինչ վերաբերում է այդ սահմանափակման համաչափությանը, ապա Դատարանը նկատում է, որ դա միայն ժամանակավոր միջոց էր: Ներպետական դատարանները մերժել են դիմումատուի հայցը քննել՝ մինչեւ պետության կողմից ավանդների վերականգնման համապատասխան ընթացակարգերի ընդունումը: Դատարանն այդ կապակցությամբ նշում է, որ խնայողությունների վերականգնման հարցը տարիներ շարունակ եղել է իշխանությունների ուշադրության կենտրոնում, եւ աստիճանաբար քայլեր են ձեռնարկվել այդ խնդիրը լուծելու համար, այդ թվում՝ ավանդատուների ամենախոցելի կատեգորիաներին իրենց խնայողությունների արժեզրկման համար փոխհատուցում պահանջելու հնարավորություն տվող կարգի ընդունումը 2006 թվականին (տե՛ս վերելում 26-28-րդ

պարբերությունները): Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը կարծում է, որ դիմումատուի՝ դատարանի մատչելիության սահմանափակումն անհամաչափ չէր:

45. Հետեւաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

46. Դիմումատուն բողոքել է, որ չի կարողացել վերականգնել Հայխնայբանկում ներդրած իր խնայողությունները, այդ թվում՝ ավանդներն ու արժեթղթերը, եւ վկայակոչել է Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքը, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»:

Ընդունելիությունը

1. Կողմերի փաստարկները

ա) Կառավարությունը

47. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 35-րդ հոդվածով: Նախեւառաջ, ներպետական դատարաններ ներկայացրած նրա հայցն ուղղված էր ոչ թե Հայխնայբանկի, այլ Կառավարության դեմ:

Այնուամենայնիվ, ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղի իրավահաջորդը ոչ թե Կառավարությունն էր, այլ Հայխնայքանկը, որն էլ կրում էր դրանից բխող բոլոր պարտավորությունները: Երկրորդ, դիմումատուն Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի որոշումը վիճարկել էր իրավունքի միայն դատավարական, այլ ոչ թե նյութական խախտման հիմքով՝ այդպիսով իր բողոքներից որեւէ մեկն ըստ բովանդակության չբարձրացնելով Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն: Վերջապես, դիմումատուի կողմից Վարչական շրջանների դատարան ներկայացված հայցի բովանդակությունը տարբերվում էր նրա կողմից Դատարան ներկայացված պահանջներից:

48. Կառավարությունն այնուհետեւ պնդել է, որ ավանդների վերադարձման պատասխանատվությունը կրում էր ոչ թե պետությունը, այլ Հայխնայքանկը: 1996 թվականին Հայաստանի [Հանրապետության] պետական մասնագիտացված խնայողական բանկը վերակազմավորվել է «Հայխնայքանկ» բաժնետիրական ընկերության, որն իր հերթին մասնավորեցվել է 2001 թվականին: Այդպիսով, 2001 թվականից սկսած՝ Հայխնայքանկը մասնավոր ընկերություն էր, իսկ պետությունը պատասխանատվություն չէր կրում մասնավոր անձանց հետ դրա հարաբերությունների, այդ թվում՝ ավանդների վերադարձման նրա պարտավորության համար: Պետությունը պատասխանատվություն էր ստանձնել միայն ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման համար եւ հանդես էր գալիս որպես դրանց մարման երաշխավոր: Այդ նպատակով 1993 թվականի հուլիսի 5-ին Կառավարությունն ընդունել է թիվ 345 որոշումը, որով այն ինդեքսավորել է Հայխնայքանկում ավանդադրված տարբեր տեսակի խնայողությունները: Այնուհետեւ, 1993 թվականի նոյեմբերին Կառավարությունն իրականացրել է դրամական բարեփոխում՝ նախկին ԽՍՀՄ ռուբլին փոխարկելով հայկական դրամի՝ 200:1 հարաբերակցությամբ, եւ դրանով ապահովել է այդ ավանդների մարումը: Այդպիսով, յուրաքանչյուր ավանդատու, այդ թվում՝ դիմումատուն, իրավունք ունի ցանկացած պահի ստանալու իր ավանդները՝ վերը նշված հարաբերակցությամբ: Ավելին, նկատի ունենալով, որ ինդեքսավորման արդյունքում ավանդատուները կարող էին կրել մեծ կորուստներ,

Կառավարությունը, 2006 թվականի մարտի 16-ին ընդունելով թիվ 352-Ն որոշումը, սկսել է ավանդատուներին առաջնահերթության որոշակի կարգով տրամադրել փոխհատուցում:

49. Վերջապես, Կառավարությունը պնդել է, որ խնդրին վերը նկարագրվածի համաձայն տրված լուծումն այդքան էլ չէր տարբերվում նախկին ԽՍՀՄ-ի այլ հանրապետությունների փորձից:

բ) Դիմումատուն

50. Դիմումատուն պնդել է, որ ինքը սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Նախեւառաջ, Կառավարությունն իր 1993 թվականի հուլիսի 5-ի թիվ 345 որոշմամբ երաշխավորել է Հայինայբանկում ներդրված ավանդների եւ այլ արժեքների պահպանումը եւ վերադարձելիությունը: Ավելին, Կառավարությունն իր 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշմամբ ստանձնել է Հայինայբանկում ներդրված ավանդների ինդեքսավորման պարտավորությունը: Ինչ վերաբերում է 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերին եւ Հայինայբանկի սերտիֆիկատներին, ապա դրանց մասով բոլոր գործառնությունները դադարեցվել էին Գերագույն խորհրդի 1993 թվականի հունիսի 10-ի որոշմամբ: Ինչ վերաբերում է 1990 թվականի նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերին, ապա դրանց մարումը Կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշմամբ համարվել է անիրագործելի, եւ Կառավարության 1993 թվականի հուլիսի 5-ի թիվ 345 որոշմամբ դրանց արժեքն ինդեքսավորվել է 300 տոկոսով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայինայբանկն ավանդների ու արժեթղթերի մասով որեւէ պարտավորություն չուներ, եւ Կառավարությունն էր կրում այդպիսի պարտավորություններ եւ [գործով] պատշաճ պատասխանողն էր: Ավելին, ավանդներն ու արժեթղթերը վերադարձնելու՝ Հայինայբանկի իրավասությունը եւ կարողությունը սահմանափակվել է Կառավարության՝ վերը նշված որոշումներով:

51. Երկրորդ, Վճռաբեկ դատարան ներկայացված իր բողոքում իրավունքի նյութական խախտմանը վերաբերող փաստարկներ առաջ քաշելու

անհրաժեշտություն չկար, քանի որ նրա հայցը չէր քննվել ըստ էության:

52. Վերջապես, ներպետական դատարաններ ներկայացված իր հայցերն ամբողջովին արտացոլել են Դատարան ներկայացված իր բողոքների բովանդակությունը:

2. Դատարանի գնահատականը

53. Դատարանը գտնում է, որ կողմերի ներկայացրած փաստարկներն ամբողջությամբ քննելու անհրաժեշտություն չկա, քանի որ սույն բողոքն ամեն դեպքում անընդունելի է հետևյալ պատճառաբանությամբ:

ա) Դիմումատուի ավանդների առնչությամբ

54. Դատարանը նկատում է, որ դիմումատուի կողմից Հայխնայբանկում փաստացի ներդրված գումարները, անկախ դրանց ներկայիս իրական արժեքից, անկասկած համարվում են «գույք»՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (տե՛ս *Գայդուկը եւ այլք ընդդեմ Ուկրաինայի* (որոշում) [*Gayduk and Others v. Ukraine* (dec.)], թիվ 45526/99, 46099/99, 47088/99, 47176/99, 47177/99, 48018/99, 48043/99, 48071/99, 48580/99, 48624/99, 49426/99, 50354/99, 51934/99, 51938/99, 53423/99, 53424/99, 54120/00, 54124/00, 54136/00, 55542/00 եւ 56019/00, ՄԻԵԴ 2002-VI (քաղվածքներ)): Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ դիմումատուի գանգատի հիմնական նպատակն այդ գումարների վերականգնում պահանջելն է՝ պահպանելով դրանց գնողունակությունը: Նույնը հետեւում է ներպետական դատարաններ ներկայացրած նրա հայցից, որում նա պահանջել է իր ավանդները վերադարձնել խորհրդային ռուբլով՝ արժույթ, որն այլեւս գոյություն չունի՝ այդպիսով փորձելով վերականգնել իր խնայողությունների սկզբնական արժեքը:

55. Դատարանն այդ առնչությամբ նշում է, որ դիմումատուի խնայողությունները խորհրդային ռուբլու կտրուկ արժեզրկման ու գնաճի հետեւանքով կորցրել էին իրենց գնողունակությունը: Այնուամենայնիվ,

Դատարանը վերահաստատում է, որ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով պետության վրա չի դրվում ֆինանսական հաստատություններում ավանդադրված գումարների գնողունակությունը խնայողությունների պարբերական ինդեքսավորման միջոցով պահպանելու որեւէ ընդհանուր պարտավորություն (տե՛ս *Ապոլոնովն ընդդեմ Ռուսաստանի (որոշում)* [*Appolonov v. Russia* (dec.)], թիվ 67578/01, 2002 թվականի օգոստոսի 29, եւ *Գայրուկի եւ այլոց գործը՝ վերելում* հիշատակված): Ինչ վերաբերում է 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշմամբ Կառավարության ստանձնած պատասխանատվությանը, ապա այն վերաբերում էր ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորմանը եւ կախված էր փոխհատուցում տրամադրելու համապատասխան կարգ ներդնելուց եւ այդ նպատակով կատարվող բյուջետային հատկացումների հասանելիությունից: Այդ պատճառով, տվյալ ժամանակահատվածում այն դիմումատուին չի վերապահել որոշակի գումար ստանալու իրավունք, եւ նրա կողմից հարուցված դատական վարույթը չի վերաբերել իրեն պատկանող որեւէ «առկա գույքի»: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը տվյալ գործով կիրառելի չէ:

56. Հետեւաբար, գանգատի սույն մասը *ratione materiae* (*առարկայական իրավագործության առումով*) անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, եւ պետք է մերժվի՝ 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

բ) Դիմումատուի արժեթղթերի առնչությամբ

57. Դատարանն ի սկզբանե վերահաստատում է, որ տնտեսական արժեք ունեցող արժեթղթերը կարող են համարվել «գույք» (տե՛ս *Յասինսկիյն եւ այլք ընդդեմ Լիտվայի* [*Jasinskij and Others v. Lithuania*], թիվ 38985/97, Հանձնաժողովի 1998 թվականի սեպտեմբերի 9-ի որոշում): Դիմումատուն 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերը եւ ԽՍՀՄ Խնայքանկի սերտիֆիկատները ձեռք բերելիս պարտատոմսերի մասով ստացել է Խորհրդային կառավարության կողմից մայր գումարի հետվճարման իրավունք՝ պայմանով, որ այդ ընթացքում վիճակախաղի դրական արդյունք չէր լինի, իսկ սերտիֆիկատների

մասով՝ մայր գումարի եւ հաշվեգրված տոկոսների հետվճարման իրավունք: Ինչ վերաբերում է 1990 թվականի պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերին, ապա ի հավելումն որոշակի դրամական անվանական արժեք ունենալուն՝ դրանք դիմումատուին իրավունք էին վերապահում ստանալու տարբեր տնտեսական ու կենցաղային ապրանքներ՝ առանց որեւէ հավելավճարի: Դատարանը կարծում է, որ այդպիսի պարտատոմսերն ու սերտիֆիկատները, իհարկե, կարող են համարվել սեփականության իրավունք առաջացնող գույք (նույն տեղում):

58. Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ Թիվ 1 արձանագրությունը Հայաստանի նկատմամբ ուժի մեջ է մտել միայն 2002 թվականի ապրիլի 26-ին, եւ, միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող կանոններին համապատասխան, դրա դրույթները Հայաստանի համար պարտադիր չեն այնպիսի գործողության կամ փաստի հետ կապված, որը տեղի է ունեցել, կամ այնպիսի իրավիճակի հետ կապված, որը դադարել է գոյություն ունենալ մինչ այդ օրը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Բլեչիչն ընդդեմ Խորվաթիայի* [ՄՊ] [*Blečić v. Croatia* [GC]], թիվ 59532/00, § 70, ՄԻԵԴ 2006-...):

59. Ինչ վերաբերում է 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերին եւ ԽՍՀՄ Խնայքանկի սերտիֆիկատներին, ապա Դատարանը նշում է, որ Հայաստանի Գերագույն խորհուրդն իր 1993 թվականի հունիսի 10-ի որոշմամբ թեւէ երաշխավորել է քաղաքացիների՝ Հայխնայքանկում ներդրված ավանդների եւ այլ արժեքների պահպանումը եւ վերադարձելիությունը, այնուամենայնիվ, որոշել է դադարեցնել այդ արժեթղթերի մասով բոլոր գործառնությունները (տե՛ս վերելում 19-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է 1990 թվականի պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերին, ապա Դատարանը նշում է, որ Կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշմամբ դրանց փոխարկումը տնտեսական ու կենցաղային ապրանքների համարվել է անիրագործելի (տե՛ս վերելում 15-րդ պարբերությունը): Հետեւաբար, միջամտությունը դիմումատուի սեփականությանը տեղի է ունեցել հենց այդ օրերին, այսինքն՝

Թիվ 1 արձանագրությունը Հայաստանի նկատմամբ ուժի մեջ մտնելուց շատ ավելի առաջ:

60. Հետեւաբար, գանգատի սույն մասը *ratione temporis (ժամանակային իրավագործության առումով)* անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, եւ պետք է մերժվի՝ 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* դատարանի մատչելիության իրավունքի մերժման վերաբերյալ բողոքն ընդունելի, իսկ գանգատի մնացած մասը՝ անընդունելի.

2. *Վճռում է*, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի չի ունեցել:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2011 թվականի մարտի 22-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Սանտիագո Կեսադա
Քարտուղար

Ժոզեֆ Քասադեւալ
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետին եւ Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետին համապատասխան՝ այս վճռին կից ներկայացվում է դատավոր Զիմելեի առանձին կարծիքը:

Ժ.Ք.Մ.

ԴԱՏԱՎՈՐ ԶԻՄԵԼԵԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Ես լիովին համամիտ եմ սույն գործի առնչությամբ Պալատի դիրքորոշմանը: Կցանկանայի հիմնավորմանն ավելացնել եւս մեկ ասպեկտ, որն իմ կարծիքով ունի հիմնարար կարեւորություն, թեւեւ պատասխանող պետությունն այն լիովին չի զարգացրել:

Սույն գործը հարուցվել է Խորհրդային Միության՝ այդ ժամանակ պետության կողմից խիստ կենտրոնացված կառավարում ունեցող տնտեսության փլուզման համատեքստում: Հայաստանի Հանրապետությունն իրավահաջորդ պետություններից մեկն է: Դիմումատուն 1970-ական եւ 1980-ական թվականներին խորհրդային ռուբլով մի քանի անգամ ավանդներ է ներդրել ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում: Խորհրդային Միության փլուզումից եւ Հայաստան պետության կազմավորումից հետո դիմումատուն, նախկին ԽՍՀՄ-ի տարբեր ծայրամասերում գտնվող՝ նախկին Խորհրդային Միության բազմաթիվ այլ քաղաքացիների նման, ցանկացել է վերականգնել այդ ավանդները: Խորհրդային ռուբլին Ռուսաստանի Դաշնության միակողմանի որոշմամբ 1993 թվականին շրջանառությունից հանվել է: Դա հանգեցրել է նրան, որ Հայաստանը ներմուծի իր սեփական արժույթը եւ ձեւավորի իր սեփական դրամական համակարգը: Այդպիսով, անկախության վաղ տարիներին արժույթի հնարավոր բացակայության վերաբերյալ մտավախություններին ավելացել է այն իրականությունը, որ այդ արժույթն այլեւս վճարման օրինական միջոց չէ:

Դա այն բազմաթիվ բնորոշ խնդիրներից մեկն էր, որոնք առաջանում են այն ժամանակ, երբ տեղի է ունենում պետության իրավահաջորդություն: Դատարանը նախկինում էլ է ստիպված եղել անդրադառնալ պետության իրավահաջորդության հետ կապված խնդիրներին, թեւեւ նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության (ՀՄՖՀ) եւ Գերմանիայի ժողովրդավարական Հանրապետության փլուզման՝ ինչ-որ առումով տարբերվող համատեքստերում: Այդ գործերում Դատարանն իրավահաջորդ պետություններին տվել է պետության իրավահաջորդությանը բնորոշ խնդիրները լուծելու լայն հայեցողություն:

Կովաչիչն ընդդեմ Սլովենիայի [*Kovacic v. Slovenia*] գործով, որը վերաբերում էր ՀՄՖՀ-ի, դրա բանկային համակարգի փլուզմանը եւ հին արտաքինությունները ներդրված խնայողությունների մասով պարտավորության վերաբաշխմանը ՀՄՖՀ-ի իրավահաջորդ պետությունների միջեւ, Մեծ պալատը համաձայնել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետ այն մասով, որ «այդքան հազարավոր անհատներին փոխհատուցելու հարցը պետք է լուծվի իրավահաջորդ պետությունների միջեւ համաձայնությամբ» (*Կովաչիչն ընդդեմ Սլովենիայի*, թիվ 44574/98, 45133/98 եւ 48316/99, [ՄՊ], 2008 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ, § 256):

Պետության իրավահաջորդության հետ կապված ոլորտի փորձագետները նախկին ԽՍՀՄ-ի վերաբերյալ կատարել են իրենց դիտարկումն այն մասին, որ «[նախկին ԽՍՀՄ-ի] ութ հանրապետությունների միջեւ (բացի Ուկրաինայից) 1991 թվականի հոկտեմբերի 18-ին ստորագրվել է «Տնտեսական եւ դրամական միության մասին» պայմանագիրը ..., եւ բանակցությունները շարունակվել են մինչեւ դեկտեմբեր՝ Մինսկի պայմանագիրը՝ ստեղծելով Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ), որի նպատակն էր ստեղծել դրամական միություն» (Ժ. Բյուդդու, «Դրամը եւ պետության իրավահաջորդությունն Արեւմտյան Եվրոպայում» [G. Burdeau, “Money and State Succession in Eastern Europe”], Բ. Ստերն (խմբ.), *Փլուզումը, ընթացքը եւ իրավահաջորդությունն Արեւմտյան Եվրոպայում*, Քլյուվեր լո ինթերնեյշնլ [*Dissolution, Continuation and Succession in Eastern Europe*, Kluwer Law International], 1998 թվական, էջ 48): Այնուամենայնիվ, սկզբնական քաղաքական կամքը չուղեկցվեց համապատասխան տնտեսական պայմաններով, եւ այդպիսով, նախկին Խորհրդային Միության իրավահաջորդ պետություններից որոշների, այդ թվում՝ Հայաստանի մասնակցությամբ ո՛չ 1991 թվականի համաձայնագիրը, ո՛չ էլ հետագա համաձայնագրերը գործողության մեջ չդրվեցին: Հետագա դիտարկումները ցույց տվեցին, որ «Ռուսաստանի՝ 1993 թվականի հուլիսի դրամական բարեփոխումը, որը հանգեցրեց առանց շահագրգիռ մյուս իրավահաջորդ պետությունների համաձայնության մեծ քանակությամբ ռուբլի շրջանառությունից դուրս հանելուն

(տե՛ս 6-7-րդ պարբերությունները), [...] արժանացավ քննադատության» Ռուսաստանի Դաշնությունում այդ ժամանակ: «Մյուս կողմից՝ միջազգային իրավունքի տեսանկյունից այլ հանրապետություններ, կարծես թե, բաց քննադատություն չեն ներկայացրել» (նույն տեղում՝ էջ 53):

Ամեն դեպքում, պարզ է, որ նոր պետությունները Խորհրդային այդչափ կենտրոնացված տնտեսությունից անջատվելիս կանգնեցին հսկայական դժվարությունների առջև: Խորհրդային ֆինանսական միջոցները համաչափորեն չբաշխվեցին իրավահաջորդ պետությունների միջև: Դա, թերեւս, առավել լուրջ խնդիր էր նախկին խորհրդային համատեքստում, քանի որ ավանդները, դրամական պահուստները եւ այլն խիստ կենտրոնացված էին: Այդպիսի հանգամանքներում եւ չնայած հայկական պետության լավագույն մտադրություններին, Դատարանի համար շատ դժվար կլինեւ Կոնվենցիայի շրջանակներում վճիռ կայացնել այն մասին, որ Հայաստանը պատասխանատու է խորհրդային ռուբլով ներդրված ավանդների համար, կամ դրանց փոխարեն պետք է տրամադրվեւ որոշակի փոխհատուցում: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ շահագրգիռ պետությունները միջազգային իրավունքին համապատասխան արել են հնարավոր ամեն ինչ՝ քննվող հարցերը կարգավորելու համար: